Տէր Յովանէսն կովեցան վասն փոքր ինչ պատճառ դնելով ըստ առաջին նախանձու իւրեանց եւ անասելի բան ասացին նմա, վասն որոյ զայս լեալ վարդապետին ի դաս քաշեց անիծելով Գշի օրս։

Շաբաթ օր Օգոստոս ամիս։

Կիրակի օրս (2 Օգոստ.) Մելքոնենց հարսն ի հոր ջրոյն անկեալ ինքնին, և որք որ անդն կան սկեսուրն եւ դստերք նմին՝ իմացեալ եւ զաղաղակ բարձեալ, մինչև անցաւորք ճանապարհին զայն լեալ և ի ներքս ի տունն դիմեալ՝ թէ զի՛նչ է լեալ, եւ նոքա ասեն թէ Այս այսպէս եղեւ. եւ նոքա երթեալ ի բերան գբոյն ձայնեն առ նա թէ կեա՞ս ողջ. և նա ասէ՝ Այո՛. եւ ասեն թէ Մա՞րթ է որ պարան արկանեմք առ քեզ և կապեսցես ընդ անձամբդ և ի վեր հանցուք զքեզ մինչչև մեռեալ իցես. և նա ասէ անտի եթէ այլն[1]) իմ բաժանեալ աստի ընդ իմ դայ ի տուն հօր եւ մօր իմոյ զի անդ կացցուք, և ես աստի ելանեմ, և եթէ ոչ լինի այդ՝ ես մեռանիմ աստ. և նոքա ասեն՝ Ըստ բանի քում առնելոց եմք, բայց այժմ ե՛լ, քանզի արիւն քո ի վերայ մեր անկանի եւ ամենայն բնակչացս մեծ նեղութիւն տան բռնաւորք վասն արեան քո՝ դատապարտելով զմեզ ի բանտ եւ ի մահ. ե՛լ եւ որպէս կամիս՝ արա՛։ Եւ ապա կապեալ զպարանն զանձամբն եւ նոցա քաշելով ի վեր հանեն։

Դշի օրս (5 Օգոստ.) վարդապետին (Մարտիրոս) վերայ չաւուշ եբեր Էսքէրի տղան թէ ե՛լ երթիցեմք ընդ քեզ առ փաշան, դու վասն է՞ր ի դաս կու քաշես զիս. և քէֆիլ ետ նա։

Եւ առաւօտուս Եշի (6 Օգոստ.) եթէ վաղիւն դատանիս ի տիւանն։

1) առն.